ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2024 թ. թիվ 337-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԳԽ/15.2/39333-2024 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և վերահսկող համատեղ հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին նախագահին՝ մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը մարզում անցկացնել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել ինձ:
3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:
4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Վ.Սուքոյանին:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-12-06 15:04:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024թ. դեկտեմբերի 6
Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
2024 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 337- Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Վ.Սուքոյան	-	Հանձնաժողովի նախագահ, մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության պետ
Ա.Ամիրխանյան	-	մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Կ.Մկրտչյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Դիլիջան/
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Բերդ/
Ա.Խաչատրյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Իջևան/
Ն.Հարությունյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Նոյեմբերյան/:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

06.12.2024

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241